Ըսեց.—Դաւիթ էրեկու էրեխէն է, էդ ի՞մալ ձըզի իդըմ-ալայ ի էրի։

Ըսեց.—Գինաս իդա տեղի Դաւիթն է, մէկ անձնահուր մ'է դարձի Դաւիթ։

Մսրամելիք խոշուն էրեց ու քոմեց։

Եօթ տարի խոշուն էրեց. էն խըդր խոշուն էրեց, օր աստղին հադին հսաբ կէր, խոշունին չ'կէր։

Խոշուն գիշեր քաշեց ու էկաւ. մէրն ու քուր լէ հետն էկան։

Գիշեր էկան, հասան Սասուն, ու Սասունայ չորս կողմ փաթեց խոշուն, հմալ փաթեց, օր խոշուն էկաւ, առաւ իրար։

Լուսուն Ցռան-Վէգոն էլաւ լուացուելու, տեսաւ, օր աստղին հսաբ կէր, խոշունին չ'կէր։

Էտ դարձաւ, փախաւ, մտաւ ներս։

Քեռի-Թորոսիկ էլաւ լուացուելու։ Քեռի-Թորոսիկ էլաւ, տեսաւ, օր աստղին հադին հսաբ կայ, խոշունին չ'կայ։

Քեռի-Թորոսիկ էկաւ, կայնաւ տէրտրոջ տուռ ու Դաւիթ խանչեց, հանեց դուս։

Դաւիթ դուս էկաւ։

Ու ըսեց.—Տ'օ տղայ, էդ ի՞նչ ցին էր, հանիր մըր գլոխ։

Ըսեց.—Ի՞նչ իմ էրի, Քեռի-Թորոսիկ։

Ըսեց.—Գացիր ճապաղջուրն ու Քոդէն աւիրեցիր, հըլա ի՞նչ իս էրի. գինաս էդի Պիրաբադին ու Խոզբադին ա, ըսեց. էդի Մսրամելիքն է, Հնդայ ամիրէն է ու Բաղդըդու խալիֆէն է ու քու մեծ ախպէրն է, դու ըդոր ջուաբ ի՞մալ պդի տաս։

Ըսեց.—Քեռի-Թորոսիկ, էղածն էղեր է, բան է պատահեր է, ի՞մալ էնինք։

Քեռի-Թորոսիկ ըսեց.—Ես կ'երթամ Բանձրիկ Մարաթուկ, մէկ Սըփ Նշան մի կայ հոնի, հանիմ ու բերիմ։

Սըփ Նշան էն տեղէն հանեց ու բերեց. բերեց տուեց Դաւթին[1])։

---

[1]) Ա. վարիանտով Դաւիթ ինքն է ստանում սուրբ Նշանը